

Ճգնաւորները հետեւեցան սիրով Մովսիսի խորհրդին եւ մեկնեցան Հայաստան: Իսկ Մովսէս թողուց Երուսաղէմը 1611ին եւ դարձաւ «առ վարդապետն իւր Գրիգոր Կեսարացի, որ էր ի Կ. Պոլիս, քանզի թագաւորական հրամանաւ նստեալ էր առաջնորդ քաղաքին՝ պատրիարք անուամբ: Եւ կացեալ յաշակերտութիւն Գրիգոր վարդապետին յամս ինչ պարկեշտ՝ եւ սրբակրօն վարուք՝ ոչ պաճոյճ եւ փափուկ հանդերձիւ որպէս եւ այլքն էին ի ժամանակին, այլ խոշորազգեստ եւ պահեցող, որ ի շարաթ օր եւ ի կլերակէ օր լուծանէր ի կերակուրս նաւահատեաց, զատեալ ի մսոյ եւ ի գինւոյ, եւ հանապազ սաղմոսերդ եւ պատարագամատոյց»¹³:

Այս տեղ, պատրիարքարանի մէջ երկրորդ անգամ կը պատահի իրեն, 1612ին, Գրիգոր Դարանաղցի, որ իմանալով թէ մտադրութիւն ունի Մովսէս միւսանգամ Երուսաղէմ երթալու, խորհուրդ կ'ընեն, որ ի միասին կատարեն ճանապարհորդութիւնը. Դարանաղցւոյն տողերն են. «Եւ աէր Մօսէսն, որ յայնժամն ի հնազանդութիւն կայր մօտ առ նա (Գր. Կես.), ոչ ուսանելոյ սակս, այլ դաւազան առնելոյ աղաքաւ, որ աշակերտակից էր սորա առ ոտս Սրապիոն կաթողիկոսի Եդեսացոյն. նա առանձին խցի կայր ի լու-

¹³ Դաւր. 286: Ո՛րքան միարան են այս տողերուն հետ Սիմէոն Լեհացւոյ եւ Գրիգոր Դարանաղցւոյ վկայութիւնները, զորոնք յիշեցինք վերը: